

Յուրաքանչյուր կազմակերպության կամ աշխատանքի ապագան կախված է նրանից, թե ովքեր են իրականացնում այս կամ այն աշխատանքները: Նույնիսկ կարելի է ասել, որ կազմակերպությունն իրենից ներկայացնում է այն, ինչ իրենցից ներկայացնում են իր աշխատակիցները (մասնակիցները):

Այդ իսկ պատճառով եւ ՌԻԵՖԱ-ն, եւ ՀՖՖ-ն զգալի ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, թե ովքեր են մասնակցելու ակումբների արտոնագրման համակարգի իրականացման աշխատանքներին: Յուրաքանչյուր արտոնագրող (ազգային ֆեդերացիա) պետք է ստեղծի անձնակազմ, որը պետք է իրականացնի արտոնագրային համապատասխան աշխատանքներ: Այդ անձնակազմը պետք է նախապատրաստի, իրականացնի եւ բարելավի ակումբների արտոնագրման համակարգը՝ տրամադրելով ակումբներին անհրաժեշտ օժանդակություն՝ աջակցելով եւ գննելով ակումբների գործունեությունը, ինչպես նաեւ կայացնելով համապատասխան որոշումներ վերջիններիս կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ:

2002թ-ից ի վեր, ՀՖՖ ղեկավարությունն անում է հնարավորինս ապահովելու ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ տաղանդաշատ կադրերի ներգրավումը ֆուտբոլային գերատեսչության աշխատանքներին: Բացառապես նույնը վերաբերում է նաեւ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգին, որն առաջին իսկ օրվանից գտնվել է ՀՖՖ ղեկավարության ուշադրության ներքո:

Արտոնագրային աշխատանքների գործնական փուլի սկզբնամասում բավականին դժվար էր գտնել անձանց, աշխատակիցների, ովքեր կկարողանային համապատասխան որակով իրականացնել անհրաժեշտ աշխատանքները, առավել էւս, որ ՌԻԵՖԱ-ն նախատեսում է բավականին թվով անձանց ներգրավվում այդ աշխատանքներին, ինչը բավականին բարդ է մարդկային ռեսուրսների խնդիր ունեցող երկրների համար, որոնցից մեկն էլ Հայաստանն է:

Համակարգին անհրաժեշտ էին հետեւյալ աշխատակիցները.

Արտոնագրման բաժին

- Նախագծի ղեկավար (պետք է իրականացնի ողջ համակարգի ընդհանուր կառավարումը)
- Արտոնագրման պատասխանատու
- Արտոնագրման պատասխանատուի տեղակալ
- ՁԼՄ-ների հետ կապերի գծով պատասխանատու (ակումբների արտոնագրման համակարգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՁԼՄ-ներին եւ ֆուտբոլային հանրությանը)
- Մարզական հարցերով փորձագետ
- Կադրային եւ վարչական հարցերով փորձագետ
- Ենթակառուցվածքային հարցերով փորձագետ
- Իրավական հարցերով փորձագետ
- Ֆինանսական հարցերով փորձագետ
- Փորձագետներին փոխարինող անձ (անձինք)

Ղեկավար մարմիններ (կոմիտեներ)

- Արտոնագրման կոմիտե (1-ին աստիճանի մարմին)
 - անդամների քանակը՝ 5 (քվորում՝ 3 հոգի)
 - առնվազն մեկական իրավաբան եւ հաշվապահ (աուդիտոր)
 - անդամները կարող են լինել ՀՖՖ վարչակազմի աշխատակիցներ

- Արտոնագրման բողոքարկման կոմիտե (Բողոքարկման մարմին)
- անդամների քանակը՝ 7 (քվորում՝ 5 հոգի)
- առնվազն մեկական իրավաբան եւ հաշվապահ (աուդիտոր)
- անդամները չեն կարող լինել ՀՖՖ վարչակազմի աշխատակիցներ

Ինչպես կտեսնի ընթերցողը, դրված էր բավականին բարդ խնդիր: Ինչեւիցե, հնարավոր եղավ կենտրոնացնել ինչպես ներքին կադրերը, այնպես էլ հիմնել համագործակցություն համապատասխան բնագավառների մասնագետների հետ, ովքեր լինելով ֆուտբոլի երկրպագու եւ անգամ սիրահար, պատրաստակամություն հայտնեցին ներգրավվել այդ աշխատանքներին անհատույց:

Հարկ է նշել, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգ ներգրավված անձանցից որեւէ մեկը չունեն նման աշխատանքների իրականացման գործնական փորձ: Միայն մի քանիսն էին 2002-2003թթ-երի ընթացքում մասնակցել ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպված սեմինարներին եւ դրանց ընթացքում ստացած տեղեկատվությունը փոխանցում էին իրենց գործընկերներին: Ընդ որում, այդ սեմինարները նույնպես կրում էին հիմնականում տեսական բնույթ (բացառությամբ միայն ենթակառուցվածքային հարցերին վերաբերող սեմինարից), քանի որ ՈՒԵՖԱ-ն նույնպես հստակ չէր կարող ասել, թե ինչպիսի ընթացք կստանա համաեվրոպական այդ ծրագիրը:

ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակիցները պատվով դուրս եկան 1-ին մրցաշրջանի նետած մարտահրավերներից՝ ձեռք բերելով անգնահատելի փորձ եւ ակումբներին տրամադրելով անհրաժեշտ օժանդակություն:

2003թ-ից ի վեր, ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակիցները մասնակցել են ՈՒԵՖԱ-ի կողմից կազմակերպված բազմաթիվ սեմինարների, որոնք կրում են ավելի ու ավելի գործնական բնույթ, ինչը զգալի օժանդակություն է տալիս համակարգի աշխատանքների բարելավմանը: Ընդ որում, այդ սեմինարների հիման վրա ՀՖՖ-ն արդեն անցկացնում է իր սեմինարները, որոնց ընթացքում ակումբների ներկայացուցիչների եւ համակարգի մասնակիցների միջեւ ծավալվում են քննարկումներ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:

Ներկայումս ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգը համալրված է փորձառու եւ որակյալ կադրերով: Ավելին, ի տարբերություն նախորդ տարիների, 2006թ-ից սկսած յուրաքանչյուր փորձագետ ունի իր տեղակալը, ինչը տարվող աշխատանքները դարձնում է առավել արդյունավետ: Նույն ժամանակահատվածից համակարգի աշխատակիցների կազմը չի ենթարկվել փոփոխության, քանի որ նրանց որակավորումն ու գործնական եւ տեսական գիտելիքները լիովին համապատասխանում են ակումբների արտոնագրման կարիքներին: Այդ անձինք են.

ՀՖՖ Արտոնագրման բաժին

- Նախագծի ղեկավար - Արմեն Մինասյան (ՀՖՖ Գործադիր տնօրեն)
- Արտոնագրման պատասխանատու - Առնո Սարգսյան (ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ)
- Արտոնագրման պատասխանատուի տեղակալ - Արթուր Ազարյան (ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ)
- ԶԼՄ-ների հետ կապերի գծով պատասխանատու – Տիգրան Իսրաելյան (ՀՖՖ մամլո քարտուղարի տեղակալ)
- Մարզական հարցերով փորձագետ - Արթուր Աբրահամյան (Ֆուրման Աբրահամյան՝ ՖԱ-ի նախագահ)

- Մարզական հարցերով փորձագետի տեղակալ - Բաբկեն Ղալոյան (ՀՖՖ մանկապատանեկան բաժանմունքի պետ)
- Կադրային եւ վարչական հարցերով փորձագետ – Լիդա Խաչատրյան (ՀՖՖ կադրերի բաժին)
- Կադրային եւ վարչական հարցերով փորձագետի տեղակալ – Քնարիկ Աբելյան (ՀՖՖ միջազգային բաժին)
- Ենթակառուցվածքային հարցերով փորձագետ – Վարդան Խաչատրյան (Երեւանի Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տնօրեն)
- Ենթակառուցվածքային հարցերով փորձագետի տեղակալ – Վարուժան Հովհաննիսյան (Երեւանի Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տնօրենի տեղակալ)
- Իրավական հարցերով փորձագետ – Լուսինե Բակումյան (ՀՖՖ Իրավաբանական բաժնի պետ)
- Իրավական հարցերով փորձագետի տեղակալ - Արմինե Հովհաննիսյան (ՀՀ Բնապահպանության Նախարարություն)
- Ֆինանսական հարցերով փորձագետ - Գագիկ Ռեչեյան (ՀՖՖ Գլխավոր հաշվապահ)
- Ֆինանսական հարցերով փորձագետի տեղակալ - Գեորգ Պապիկյան (ՀՖՖ ֆինանսական տնօրեն)

Արտոնագրման կոմիտե (1-ին աստյանի մարմին)

Նախագահ - Արմեն Ղամբարյան (ՀՖՖ Գործադիր տնօրենի տեղակալ)

Տեղակալ - Աշոտ Մանուկյան (ՀՖՖ Փոխնախագահ)

Անդամներ – Խաչիկ Դանիելյան՝ իրավաբան («X-Group» հոլդինգ)

- Հակոբ Համբարձումյան՝ հաշվապահ (ՀՖՖ հաշվապահություն)

- Մարինա Թաշչյան (ՀՖՖ մասսայական ֆուտբոլի բաժնի պետ)

Արտոնագրման կոմիտե (1-ին աստյանի մարմին)

Նախագահ - Արայիկ Մանուկյան (Արարատբանկ՝ ՓԲԸ)

Տեղակալ – Նելլի Ստեփանյան՝ իրավաբան (ՀՀ Ազգային Ժողով)

Անդամներ - Արմեն Մարկոսյան՝ հաշվապահ (Դեխս՝ ՍՊԸ)

- Սենիկ Կարա-Պողոսյան (մարզական լրագրող)

- Վահագն Դավթյան («Hummel» ընկերության ներկայացուցիչ Հայաստանում)

- Ռոբերտ Սարիբեկյան (Բանանց ՖԱ-ի մանկապատանեկան դպրոցի ուսմասվար)

- Մուշեղ Նիկոյան (Էրեբունի համայնքի No 1 մարզադպրոցի մանկապատանեկան մարզիչ)

Յուրաքանչյուր մրցաշրջանի նախօրեին համակարգ ներգրավված բոլոր աշխատակիցները ստորագրում են հետեւյալ փաստաթղթերը.

- գաղտնապահության պայմանագրեր, որով նրանք պարտավորվում են չտարածել այն տեղեկատվությունը, որը նրանք կստանան ակումբներից

- անկախության հայտարարություններ, որով նրանք տեղեկացնում են ՀՖՖ ակումբների արտոնագրման ենթակայության տակ գտնվող ակումբներից որեւէ մեկի հետ իրենց եւ իրենց ընտանիքի անդամների անձնական, գործնական եւ այլ կապերի մասին (նման դեպքերում այդ անձանց արգելվում է քննել նման ակումբի գործերը, ինչպես նաեւ մասնակցել քվեարկությանն այդ ակումբի հարցի քննարկման ընթացքում)
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատակցի Վարքագծի Կանոնագիրք, որում մատնանշված են այն էթիկական նորմերը, որոնցով պետք է իր գործունեությունում ուղղորդվի յուրաքանչյուր աշխատակից: Վարքագծի Կանոնագրքի հայերեն տարբերակը կարող էք կարդալ [այստեղ](#):